ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՈՒՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ՝ ՎՐԱՍՏԱՆ (ՔԱՂԱՔ ԹԲԻԼԻՍԻ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Նունե Պետրոսյան,

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի տեղակալ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Վրաստան (քաղաք Թբիլիսի), 2023 թվականի նոյեմբերի 21-ից 23-ը:

3. Հրավիրող կողմը.

Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակ:

4. Գործուղման նպատակը.

Մասնակցություն «Շինարարական արդյունաբերության գլոբալ մատակարարման շղթայի և դրա արտադրանքի էներգաարդյունավետության բարելավում հանուն բարձր արդյունավետությամբ շենքերի կառուցման» ծրագրի նախապատրաստման փուլի վավերացման աշխատաժողովին:

5. Քննարկված թեմաները.

Նունե Պետրոսյանը ներկա է եղել մի շարք քննարկումների, որոնց շրջանակում անդրադարձ է կատարվել Հայաստանում շինարարության ոլորտում իրականացվող աշխատանքների ընթացքին, շենքերի ու շինությունների էներգետիկ արդյունավետության բարելավման նպատակով լավագույն փորձի փոխանակմանը, ՄԱԿ-ի հետ համագործակցությանը, համատեղ ծրագրերի իրականացմանը և այլն:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

2023 թվականի նոյեմբերի 22-ին Նունե Պետրոսյանը մասնակցել է «Շինարարական արդյունաբերության գլոբալ մատակարարման շղթայի և դրա արտադրանքի էներգաարդյունավետության բարելավում հանուն բարձր արդյունավետությամբ շենքերի

կառուցման» ծրագրի վավերացման աշխատաժողովին, մասնակից պետությունների ներկայացուցիչների միջև տեղի ունեցած քննարկումներին:

Աշխատաժողովին մասնակցել են նաև Վրաստանի, Ղրղզստանի Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության, Տաջիկստանի Հանրապետության, Ուզբեկստանի Հանրապետության ոլորտային գերատեսչությունների ներկայացուցիչներ:

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ ԵՏՀ) տարածաշրջանային խորհրդական Օլեգ Դյուբինսկին ներկայացրել է աշխատաժողովի օրակարգը, ծրագրի նպատակները ու խնդիրները:

ՄԱԿ-ի ԵՏՀ-ի կայուն էներգետիկ ոլորտի ներկայացուցիչ Դարիո Լիգուտին և ծրագրի խորհրդատու Մատիյա Վայդիկը ներկայացրել են կլիմայի փոփոխության արդի մարտահրավերների լույսի ներքո շենքերի կառուցման կենսաշղթայի փուլերի, դրանց հնարավոր երկարաձգմանն ուղղված միջոցառումները, վերջիններիս էներգետիկ արդիականացման, նոր շինությունների կառուցման շղթայում էներգիայի լրացուցիչ ծախսերը կանխելու կարևորությունը:

Ներկայացվել են ծրագրի նպատակները, ակնկալվող արդյունքները և դրանց ազդեցությունը շահառու երկրների վրա:

Մասնակից երկրների ներկայացուցիչները նկարագրել են էներգետիկ խնդիրների լուծման շրջանակում էներգապահպանման, էներգախնայողության և շենքերի էներգետիկ արդիականացման ուղղությամբ իրենց պետություններում կատարվող աշխատանքները, առկա խնդիրներն ու հնարավորությունները:

Ծրագրի խորհրդատու Դիանա Կապլինսկայան ներկայացրել է շենքերի, շինանյութերի արտադրության շղթայում շահառու երկրներում առկա խնդիրները՝ կարևորելով խնդիրների արձանագրումը, չափելիությունը լուծումների ու կարգավորումների մշակման նպատակով:

Նունե Պետրոսյանը և ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակի փորձագետները ներկայացրել են կլիմայի փոփոխության մեղմման համատեքստում Հայաստանում իրականացված նորմատիվ-իրավական, օրենսդրական փոփոխությունները, շենքերի էներգետիկ արդիականացման, նոր շինությունները սահմանված չափանիշներին համապատասխան կառուցելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Նունե Պետրոսյանը ներկայացրել է Կոմիտեի կողմից իրականացվող 300 դպրոցների, 500 մանկապարտեզների կառուցման ծրագիրը, ընդգծել էներգաարդյունավետության պահանջներին համապատասխան շենքերի ու շինությունների կառուցման կարևորությունը:

Ներկայացվել է Հայաստանի մարզերում շինարարությունը խթանելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները (մշակվել և Կոմիտեի պաշտոնական կայքէջում տեղադրվել են էներգաարդյունավետության անհատական բնակելի տների բազմակի օգտագործման նախագծեր):

Նունե Պետրոսյանը կարևորել է նաև պատմական ժառանգության մաս կազմող շենքերի արդիականացման հենքային նշանակությունը:

Անդրադարձ է կատարվել ՄԱԿ-ի հետ համագործակցությանը, համատեղ ծրագրերի ու նախաձեռնությունների իրականացմանը:

Նունե Պետրոսյանը ներկայացրել է նաև Հայաստանում առկա բնակարանային խնդիրները, առաջացման պատճառները, բնակարանային խնդիրների լուծման հնարավորությունները, անդրադարձել բնակարանային շինարարությանը, բնակարանային շինարարությունը խթանող հիմնական գործիքներին, ինչպես նաև շինարարության ոլորտում էներգաարդյունավետության առանցքային նշանակությանը:

Հանդիպումներ են տեղի ունեցել աշխատաժողովի մասնակից պետությունների ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել են շինարարության և ճարտարապետության ոլորտներում երկկողմ և բազմակողմ ձևաչափով փոխգործակցության վերաբերյալ հարցեր:

2023 թվականի նոյեմբերի 22-ին Նունե Պետրոսյանը հանդիպել է Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարության տարածական պլանավորման և քաղաքաշինության գործակալության պետի տեղակալ Զուրաբ Տիկլաուրիի հետ: Քննարկվել են ոլորտային փոխգործակցությանն առնչվող մի շարք հարցեր, մասնավորապես.

Ա) տարածական պլանավորման և քաղաքաշինության ոլորտներում երկու պետությունների միջև լավագույն փորձի փոխանակում, մասնագետների վերապատրաստում, ուսանողների փոխանակման ծրագրերի իրականացում,

Բ) երկու պետություններում գործող շինարարական ընկերությունների միջև փոխգործակցության, շինարարության ոլորտում համագործակցության օրակարգի ձևավորում,

Գ) մասնակցություն Հայաստանում և Վրաստանում անցկացվող ոլորտային ցուցահանդեսներին և համաժողովներին,

Դ) շինարարության ոլորտում ներդրումների ներգրավման նպատակով իրականացվող ծրագրեր և այլն:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Միջոցառման շրջանակում մասնակից պետությունների ներկայացուցիչների միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել քննարկումները շենքերի ու շինությունների էներգաարդյունավետության բարձրացման նպատակով համագործակցության զարգացման, փորձի փոխանակման վերաբերյալ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում կողմերը պատրաստակամություն են հայտնել շարունակել համագործակցությունը Ծրագրի արդյունավետ իրականացման նպատակով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

ՆՈՒՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

24.11.2023 թվական